ՎԱՐԴԱՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ԽՍՀՄ ՓԼՈՒԶՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մարդկության պատմության տարբեր փուլերում տասնյակ կայսրություններ են կործանվել, բացառություն չէր նաև ԽՍՀՄ-ի փլուզումը, որը որակապես փոխեց աշխարհի քաղաքական պատկերը, միջազգային հարաբերությունների բնույթը:

Տոտալիտար երկրում տեղի ունեցած տարանջատման գործընթացների հետևանքով անկախ պետությունների հայտնվելը, նախկին սոցիալ-քաղաքական, տնտեսական և հոգևոր կառույցների բացառումը, սառը պատերազմի ավարտը, ներկա զանգվածային գործազրկությունն ու թշվառությունը հրամայական դարձրին այս հիմնահարցի գիտական վերլուծությունը:

Խորհրդային երկրում 80-90-ական թվականներին լճացման միտումների խորացումը կասկած չէր հարուցում, սակայն այն կարելի էր հաղթահարել բարեփոխումների ճանապարհով: Նոր քաղաքական շարժման համակիրները, արևմուտքի հակախորհրդային ուժերի թելադրանքով, շահարկեցին «վերակառուցման» գաղափարը: Հակակոմունիզմի սոցիալական հենարանն էին՝ ստվերային տնտեսության գործամոլները, կոռումպացված կուսակցական վերնախավը, քրեական հանցագործները, բուրժուական ապրելակերպն ընդունող ստեղծագործական վերնախավը, ազգայնական-անջատողական տարրերը հանրապետություններում:

Երկրի փլուզման գործընթացը իրականացնող միջուկն էր ԽՄԿԿ այլասերված վերնախավը՝ Մ. Ս. Գորբաչովի, Ա. Ն. Յակովլևի, Վ.Ա. Մեդվեդևի, Է. Ա. Շևարդնաձեի և այլոց գլխավորությամբ: Ն. Նազարբաևը և այլոք կողմնակից էին երկրում իրականացնել բարեփոխումներ և ձգտում էին պահպանել ԽՍՀՄ-ը: Ահա թե ինչու Ղազախստանում և Միջին Ասիայում չկային այնպիսի անջատողական տրամադրություններ, ինչպիսիք էին Մերձբալթիկայում, Անդրկովկասում և Ուկրաինայում:

ԽՍՀՄ-ում կային մարդիկ, որոնք կասկածում էին վերակառուցմանը: Արդարացի էին նման մտածողների տագնապները: 1991թ. իշխանության վերին ատյաններում, բացի Ա. Լուկյանովից, արդեն չկային Գորբաչովի շրջապատի այն մարդիկ, որոնց միջոցով սկսվել էր 1985թ. «վերակառուցումը» :

ԽՍՀՄ-ի ղեկավարները ոչ թե չկարողացան, այլ չցանկացան իրականացնել բարեփոխումները: Մ. Գորբաչովի «հրապարակայնությունը», «վերակառուցումը» խթանեցին անջատողական տրամադրությունները երկրում: Ա. Գ. Գրաչովը վկայակոչում էր, որ Գորբաչովը 1990-1991թթ. ծմռանը կորցրել էր լավատեսությունը և վստահությունը իր ուժերի նկատմամբ: Նրա մոտ

նկատվեց նախկին քաղաքական որակների կորուստ, ինչ-որ ընկճվածություն և դադարեց լինել ժողովրդավար լիդեր: Հասարակական հարցումների արդյունքները վկայում էին Մ. Գորբաչովի վստահության կորստի և ժողովրդականության անկման մասին: Եթե նրա իմիջը 1990թ. 60-70% էր, ապա 1991թ. սկզբներին 15% էր: Ընդհակառակը, արտերկրում, հատկապես Գերմանիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Նորվեգիայում և այլուր նրա համբավը զգալիորեն մեծացավ: 1990թ. դեկտեմբերին Նորվեգիայում Նոբելյանական կոմիտեն Մ. Գորբաչովին շնորհեց խաղաղության նոբելյան մրցանակ: Արևմտյան մամուլը նրան համարեց «տարվա մարդ» (1990թ.), «տասնամյակի մարդ», «XX դարի մեծագույն բարեփոխիչ»: Ի հակառակ Արևմուտքի դրական գնահատականներին ԽՍՀՄ-ում քաղաքագետները նրա ավանդը գնահատեցին բացասաբար: Բոլորը համոզվեցին, որ անվճռական, երերացող Մ. Գորբաչովին չհաջողվեց երկիրը դուրս բերել ճգնաժամից և խորհրդային մարդկանց ներկայացավ որպես «տիեզերական» խաբեբա:

ԽՍՀՄ-ը կարող էր հարատևել, եթե այն վերափոխվեր համադաշնության և զարգացվեր, այլ ոչ թե մատնվեր տարերայնության և ոչնչացման: Գորբաչովյան –Յակովլևյան խմբի առջև ծառացան հետևյալ հիմնախնդիրները՝ սոցիալիզմի գաղափարի ինքնասպառված համարելը և սոցիալիստական հասարակարգի կառուցումից հրաժարվելը, ԽՍԿԿ-ի կազմալուծելը, ազգամիջյան բախումներ հրահրելը, տնտեսության մեջ քաոսային վիճակ ստեղծելը, երկրի միակողմանի զինաթափելը, աշխարհի վերաձևման նպաստելը, տարածքային զիջումները Չինաստանին, ԱՄՆ-ին և այլ երկրներին:

Հակասոցիալիստական ուժերը հաղթանակ էին տանում՝ հենվելով համաշխարհային ֆինանսական հզոր ուժերի և Ռուսաստանում ձևավորվող նոր միլիարդատերերի դավաճանության վրա: Գերտերության փլուզման մեջ կար նաև կոմունիստների և ժողովրդի մեղքի բաժինը, քանզի չեղավ զանգվածային ոչ մի դիմակայություն:

Պատմությունը վկայում է, երբ սկսում է թուլանալ պետությունը, մարդիկ կորցնում են հավատը նրա նկատմամբ, սկսվում է այդ երկրի քայքայումը և այնուհետև փլուզումը:

Հակահեղափոխությունը հատկապես նշանավորվեց Բ. Ելցինի, Լ. Կրավչուկի, Շուշկևիչի 1991թ. դեկտեմբերյան բելովեժյան համաձայնությամբ՝ Խորհրդային Միությունը լուծարելու վերաբերյալ: Պետական հեղաշրջման մասին Գորբաչովը իրազեկ էր, դրա համար էլ խուսափում էր բացահայտ հանդես գալ, հակառակ դեպքում նա կդիմեր վճռական քայլերի: 1996թ. մարտի 15-ին ՌԴ Պետական դուման որոշում ընդունեց բելովեժյան համաձայնագրերը չեղյալ հայտարարելու մասին, քանզի անտեսվել էր խորհրդային ժողովուրդների կամքը:

1991թ. մարտի 17-ին ԽՍՀՄ հանրաքվեի արդյունքում 80% մասնակիցների 76%-ը տվել է իր քվեն ԽՍՀՄ-ը որպես իրավահավասար հանրապետությունների միություն պահպանելու մասին: Ի դեպ, հանրաքվեին հրաժարվեցին մասնակցել Մերձբալթյան հանրապետությունները, Վրաստանը, Հայաստանը և Մոլդավան: Թեպետ անջատողական միտումները զարգացան, Մ. Գորբաչովը ոչ մի քայլ չձեռնարկեց ԽՍՀՄ-ը ամրապնդելու ուղղությամբ: Միութենական հանրապետությունների միջև խզվեցին ավանդական տնտեսական կապերը, Վրաստանի և Մոլդավայի կառավարությունները սկսեցին չեն-թարկվել Մոսկվայի, իսկ Աբխազիայի և Հարավային Օսիայի կառավարությունները Թբիլիսիի որոշումներին:

1991թ. մարտի 17-ին ստեղծվեց ՌՍՖՍՀ պրեզիդենտի պաշտոնը, որը մարտահրավեր նետեց ԽՍՀՄ նախագահին: Մոսկվայում բազմաթիվ կուսակցական կազմակերպություններ որոշում կայացրին Մ. Գորբաչովին անվստահություն հայտնելու և պաշտոնանկ անելու մասին:

Նովո-Օգարեևում հավանության արժանացած միութենական պայմանագրի ամենավերջին տարբերակը 1991թ. նոյեմբերի 27-ին հրատարակվեց «Իզվեստիա» և «Պրավդա» թերթերում:

Նույնիսկ ոչ շատ հնուտ բարձրաստիճան պաշտոնյաներին էլ ակնհայտ էր, որ միութենական պայմանագրի մութ ձևակեպումներում փաստորեն քողարկվում էր հզոր, միասնական, կենտրոնացված պետության լուծարման գաղափարը: Նոր, փխրուն, միասնական համադաշնության պետությունների ստեղծման մասին պայմանագիրը պատրաստ էին ստորագրել Ռուսաստանի, Բելառուսի, Կիրգիզիայի, Ղազախստանի, Թուրքմենիայի, Ուզբեկստանի և Տաջիկստանի ղեկավարները: Գորբաչովը և Ելցինը շատ լավ գիտակցում էին, որ այդ Միությունը առանց Ուկրաինայի անհնար էր պատկերացնել:

ԽՍՀՄ–ի փլուզմանը նպաստեցին բազմաթիվ գործոններ: Ռուսաստանում, առավել ևս ծայրամասերում, սոցիալական, տնտեսական հող չկար սոցիալիզմի համար, ուստի հնարավոր չեղավ դուրս գալ սոցիալիզմի պատմական շրջանակներից: Խորհրդային տարիներին այդպես էլ չհաղթահարվեց տնտեսության տեխնոլոգիական հետամնացությունը, չվերացվեցին սեփականության երկու ձևերի պետականի (համաժողովրդականի) և կոոպերատիվ-կոլտնտեսայինի միջև եղած էական տարբերությունները: Ջանգվածային ըմբռնմամբ համաժողովրդականը ոչ մեկի սեփականությունը չէր և համարվում էր «անտեր», շատ դեպքերում սկսել էր օգտագործվել անաշխատ եկամուտների կորզման համար: Սոցիալիզմն անհիմն կերպով նույնացվում էր պետական սեփականության հետ: Լռության էր մատնված սեփականության երրորդ ձևը ստվերային տնտեսությունը: Նաև կար սխալ մոտեցում մասնավոր կամ անհատական աշխատանքային գործունեության նկատմամբ:

Երկրին մեծ վնաս հասցրեց բազմատնտեսածևությունից հրաժարվելը: ՉԺՀ-ի և այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ սոցիալիզմի կառուցումն ենթադրում է նաև մասնավոր սեփականություն:

Տասնամյակներ շարունակ երկրում կիրառվում էին տնտեսվարման հնացած մեթոդները, իսկ արդյունավետ տնտեսածևերն անհիմն կերպով մերժվում էին: Հնացած արտադրահարաբերությունները պատնեշեցին երկրի սոցիալական առաջադիմությանը:

Պլանավորման մեջ թույլ էին տրվում ծևախեղումներ, առկա էին սուբյեկտիվիստական մոտեցումները, պակասում էր գիտական հիմնավորվածությունը և սոցիալական ոլորտի զարգացման նկատմամբ հարկ եղած ուշադրությունը: Գունազարդված ներկայացնելով կյանքը՝ քողարկվում էին ազգամիջյան և դասակարգային հակասությունները:

Ճիշտ չէր գնահատվում սոցիալիստական հասարակության հասունության աստիճանը: Հիշենք 30-ական թվականներին Ստալինի եզրահանգումը տնտեսության սոցիալիստական եղանակի հաղթանակի մասին: Ն.Ս. Խրուշչովը առաջ քաշեց սոցիալիզմի լրիվ և վերջնական հաղթանակի վերաբերյալ հիմնադրույթը: Վերջին տարիներին խոսք էր գնում նույնիսկ զարգացած սոցիալիզմի մասին, թեպետ կյանքը ցույց տվեց, որ տեղի ունեցող փոփոխությունները սոցիալիզմի օգտին չէին: Վերջին երեք հնգամյակում ազգային եկամտի հավելավճարի տեմպերը դանդաղել էին ավելի քան երկու անգամ: 1989թ. բյուջեի պակասորդը կազմում էր 92 մլրդ ռուբլի, իսկ պետության ներքին պարտքը հասել էր 400մլրդ ռուբլու, 1990թ. վերջերին արտաքին պարտքը 50-55 մլրդ դոլարի:[1]

Ժողովրդից թաքցրեցին 1990թ. ավարտված 12-րդ հնգամյակի արդյունքները: Շարունակվեց ժողովրդական սպառման ապրանքների և ծառայությունների գների բարձրացումը: Թեպետ 1990թ. բերքի կանխագուշակումը շատ խոստումնալից էր, սակայն տոտալիտար երկրի կառավարությունը որոշեց արտերկրից կատարել հացահատիկի խոշոր գնումներ: Համանման իրավիճակ չի եղել նույնիսկ 1947թ., բայց այն ժամանակ հասկանալի էին տնտեսական դժվարությունների պատճառները: Դրա հետ մեկտեղ ամբողջատիրության վարչահրամայական համակարգի ծանր ժառանգությունը, տնտեսական բարեփոխումների գծով անցկացրած ծեռնարկումների անհետևողականությունն ու կիսակատարությունը, տնտեսության ղեկավարման մեջ թույլ տրված սխալները, օրենքի ոտնահարումը և այլ կամայականություններ երկրում առաջացրին խոր տնտեսական ճգնաժամ: Գերհզոր երկրում աճեց սոցիալական լարվածությունը, գործադուլները, գործազրկությունը: Նկատվում էին խախտումներ

1. Р. А. Медведев. Советский Союз: последний год жизни.-М.: "Права человека", 2003, с. 9, 13.

սոցիալիզմի կարևորագույն սկզբունքի աշխատանքի բաշխման սկզբունքում:

Խորացել էին խնամառուական տրամադրությունները, գիտակցության մեջ արմատավորվել էր «համահարթման» հոգեբանությունը, խարխլվել էին բարոյական վեհ արժեքները: Խորհրդային ժողովրդի որպես ինտերնացիոնալ նոր ընդհանրության մասին 70-ամյա կոչերը, ժողովրդական լայն զանգվածների գիտակցության մեջ աստիճանաբար ոչնչացրին ազգային հպարտության զգացումը: Զգալիորեն աճեց հակասոցիալական երևույթների և հանցագործությունների թիվը:

50-80-ական թվականներին տոտալիտար վարչակարգի օրոք պետական այրերը չկարողացան արդյունավետորեն օգտագործել նախապատերազմյան հնգամյակների, ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի և ետպատերազմյան վերականգնման տարիներին երկրում ձեռք բերված խոշոր նվաճումները: Բացասական գործընթացներին լրջորեն նպաստեց երկրում գոյացած ընտրական ձևական համակարգը: Երկրում գրեթե անփոփոխ էր մնացել քաղաքական վերնախավը, Կրեմլում իշխում էին նույն քաղբյուրոյի անդամները, կառավարական համակարգը ուռճացվել էր նախկին բյուրոկրատներով:

Խրուշչովից մինչև Գորբաչով ընկած ժամանակահատվածում հակախորհրդային քարոզչության գլխավոր թեման դարձավ զանգվածային բռնությունների դատապարտումը: Երկրում բռնադատվածների թիվը հասցվեց 100 միլիոնի, երբ ԽՍՀՄ բնակչության թիվը 170 միլիոն էր: Ժողովրդից թաքցվում էին վաղուց ճշգրտված թվերը: Ավագ սերնդի ոգին ջլատվեց: Երիտասարդ սերունդը սկսեց կասկածել հաղթող սերնդին: Երբ Գորբաչովն անցավ իշխանության գլուխ, հակակոմունիստները առաջ քաշեցին անմիջապես ստալինյան թեման, այսինքն՝ օգտվեցին խրուշչովյան նայիվ տեխնոլոգիայից:

Ազգային առանձնահատուկի նսեմացումը, ազգերի ներկայացուցիչների շահերի անտեսումը հանգեցրին անջատողական տրամադրությունների աշխուժացմանը, ազգամիջյան բախումներին: Հատկապես վտանգավոր էր այն կարծիքը, ըստ որի հանրապետությունների տնտեսական կապերը հավասարակշռված չէին, քանի որ նրանց մի մասը ապրում էր մյուսների հաշվին:

Տասնամյակներ շարունակ սքողվում էին վերևում նշված դժվարությունները ու հակասությունները, որոնք վերջիվերջո հանգեցրին ԽՍՀՄ–ի փլուզմանը:

Բազմաթիվ հեղինակներ խոշոր տերության փլուզման գլխավոր պատճառ են համարում ազգայնականությունը, իսկ սրա գլխավոր շարժիչ ուժը ազգային մտավորականությունը կամ «էթնոնոմենկլատուրան»:[2]

---

2 Р. А. Медведев. Советский Союз: последний год жизни, М., 2003, с. 255.

Ի հակառակ պաշտոնական գաղափարախոսության, թե իբր ազգային հարցը երկրում լուծված է լիովին և վերջնականապես, աստիճանաբար խորացան ազգային հակասությունները: Տոտալիտար երկրում վերացվել էին ազգային հարցերով զբաղվող բոլոր կառույցները, պահպանվել էր միայն ԽՍՀՄ ժողովուրդների ազգագրության ինստիտուտը՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի համակարգում: 80-ական թվականներին երկրում ծավալվող ժողովրդավարացման և հրապարակայնության գործընթացները պարարտ հող ստեղծեցին ազգայնական կազմակերպությունների ստեղծման և ազգային հարցերի ազատ քննարկման համար: Հատկապես Մերձբալթյան հանրապետություններում և Արևմտյան Ուկրաինայում կար ուժեղ հակառուսական ազգայնականություն: Վրացական ազգայնականությունը ուղղված էր օսերի և աբխազների դեմ, իսկ թշնամանքը խորացել էր էր հայերի և ազերիների միջև ԼՂ-ի շուրջ: Ներքին հակասությունները ծավալվեցին Մոլդավայում և Տաջիկստանում: Ազգայնականությանը զուգորդվեց անջատողականությունը: Առաջ քաշվեցին «Ուրալի», «Սիբիրի», «Պրիմորեյի» հանրապետությունների ստեղծման նախագծերը, քաղաքական շարժումներ ծավալվեցին հանուն Թաթարստանի, Չեչնիայի, Տուվայի, Կալմիկիայի և Գագաուզիայի անկախության:

ԽՍՀՄ ազգային-պետական միավորումների միասնության խարխլման գործում ամենավտանգավորը ռուսական անջատողականությունն էր: Ռուսաստանի կոմունիստները ևս նպաստեցին ռուսական սեպարատիզմին և պահանջեցին ստեղծել ԽՄԿԿ-ից անկախ ՌՍՖՍՀ կոմունիստական կուսակցություն: Ավելին՝ 1990թ. հունիսի 12-ին ՌՍՖՍՀ ժողովրդական դեպուտատների համագումարը, ուր կոմունիստական խմբակցությունը հաշվվում էր 300 մարդ, ընդունեց հռչկագիր՝ Ռուսաստանի անկախության վերաբերյալ, իսկ 1,5 տարի անց ՌԴ-ը ոչ միայն դուրս եկավ ԽՍՀՄ կազմից, այլև Ուկրաինայի և Բելառուսի հետ հայտարարեց Խորհրդային Միության՝ որպես աշխարհաքաղաքական իրողության վերացման մասին: 1990թ. ամռանը Բորիս Ելցինը դուրս եկավ ԽՄԿԿ շարքերից՝ կուսակցության 28-րդ համագումարի աշխատանքի ժամանակ: ԽՄԿԿ շարքերից դուրս եկան ռուսական նոր կառավարության բոլոր անդամները, ինչպես և Ելցինի շրջապատի մարդիկ: Փաստորեն երկրում ստեղծվեց երկիշխանություն: ՌՍՖՍՀ կոմկուսի բազմաթիվ ակտիվիստներ աջակցեցին Ելցինի գրեթե բոլոր անջատողական գործողություններին: Այս առումով չի կարելի ամբողջատիրության անկման բնույթն ու պատճառները քննարկել ԽՄԿԿ-ի վերացման պատճառներից անջատ, և ոչ միայն այն բանի համար, որ այդ գործընթացները տեղի ունեցան միաժամանակ: ԽՄԿԿ–ն միակ քաղաքական ուժն էր, որ ղեկավարում և ուղղություն էր տալիս խորհրդային հասարակությանը: Այն խորհրդային պետության ստեղծողն էր, ուստի նրա թուլացումն ու վերացումը անխուսափելիորեն հանգեցրեցին պետության անկմանն

ու կործանմանը: Նվազ դեր չխաղաց պաշտոնական կուսակցական գաղափարախոսության հեղինակության անկումը:

Քաղաքագիտական գրականության մեջ կա նաև այն տեսակետը, թե ԽՄԿԿ-ի կործանման և երկրի փլուզման գլխավոր պատճառը սոցիալիստական ճամբարի քայքայումն է:

Անառարկելի է, որ կոմունիստական կայսրության անկումը արագացնելու նպատակով Ռ. Ռեյգանի և Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի պայմանավորվածությունը, Լեհաստանում «Համագործակցության» և Լեխա Վալենսի իշխանության գալը, ինչպես նաև ՏՓԽ-ի և Վարշավայի Պայմանագրի վերացումը, Բեռլինի պատի քանդումը ստեղծեցին մի շարք դժվարություններ գերիզոր տերության համար: Սակայն չի կարելի անտեսել ԽՍՀՄ-ի հակադարձ ազդեցությունը Արևելյան երկրների վրա: Առաջին խորհրդային երկրի տնտեսական և քաղաքական ճգնաժամը, նրա միջազգային հեղինակության նվազումը նպաստեցին «թավշյա հեղափոխությունների» իրականացմանը:

Ըստ իս ԽՍՀՄ-ի փլուզման գլխավոր պատճառը սառը պատերազմի վերջնական արդյունքում կուսակցական վերնախավի, հատկապես Մ. Գորբաչովի «վերակառուցումն» է, որը նպաստեց Արևմուտքի անարգել թափանցմանը ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներ:

ԱՄՆ-ի պետական և քաղաքական գործիչները (Ա. Դալլեսը և այլոք) մշակել են «սառը պատերազմի» դոկտրինան, այսինքն ներսից քայքայել, ջլատել սոցիալիստական համակարգը, առաջին հերթին ԽՍՀՄ-ը: Սառը պատերազմի և ռազմական մրցավազքի մեջ միայն ԱՄՆ-ը չէր մեղավոր, քանզի կոմունիստական պետական գործիչները առաջ քաշեցին ամբողջ աշխարհում կոմունիզմի հաղթանակի անխուսափելիության հայեցակարգը, որը մարտահրավեր էր կապիտալի աշխարհին:

1981թ. մայիսի 18-ին Ռոնալդ Ռեյգանը, հանդես գալով Նոտր-Դամի Համալսարանում, հայտարարեց. «Կոմունիզմը հակաբնական գլուխն է մարդկության պատմության մեջ, որի վերջին էջերը գրում են այսօր: Նման կարգը չի կարող գոյություն ունենալ անվերջ, և անպայման կգա նրա վերջը»[3]:

Երբ տասը տարի անց Ռ. Ռեյգանին հարցրին, թե որն է նրա նախագահական ամենամեծ նվաճումը. նա առանց երկմտելու պատասխանել է. «Ես հաղթեցի սառը պատերազմում»:[4]

Ռեյգանը համոզված էր, որ խաղաղության կարելի է հասնել ոչ թե միջուկային սպառազինության մրցավազքի սառեցմամբ, այլ երկրի ռազմական, տնտեսական հզորության մեծացման հաշվին:

---

3 Р. Рейган. Откровенно говоря: Избранные речи.-М.-с162

4 На перепутье: Сб. статей.-М, 199.-с.186

ԽՍՀՄ–ը 70-տարի դիմացավ ամերիկյան հատուկ ծառայությունների և տարբեր տեսակի գաղտնի գաղափարական և քաղաքական կենտրոնների ճնշումներին, սակայն Արևմուտքի տնտեսական և ռազմական մրցակցության ընթացքում, առանց դրական փոփոխություն կատարելու, խորհրդային երկրի ղեկավարին, ոչինչ չէր մնում անելու, քան ժխտել սոցիալիզմի խորհրդային մոդելը և համաձայնվել կայսրության փլուզմանը: Անշուշտ, Արևմուտքին հաջողվեց երկրի ներսում իրականացնել հոգեբանական այնպիսի պատերազմ, որը թույլ տվեց խորհրդային ժողովուրդներին հրաժարվելու գերտերությունից:

ՁԼՄ-ներում, հանրահավաքներում ի հայտ եկան նոր «քաղաքական գործիչներ» Ելենա Բոններ, Յուրի Աֆանասև, Անատոլի Սոբչակ, Գենադի Բուրբուլիս, Գալինա Ստարովոյտովա, Վալերի Նովոդվորսկայա և այլոք, որոնք ծավալելով քայքայիչ գործունեություն պահանջեցին «փտող կայսրությունը» ենթարկել «քաղաքակիրթ ձևափոխման»:

Վերակառուցումը անհրաժեշտ քայլ էր իրավիճակը փոխելու, սակայն այն վստահվեց թույլ, անվճռական մարդկանց, և որոնք էլ այն տարան կեղծ ուղիով: «Երկաթյա վարագույրը» քանդվեց ոչ թե Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի հարվածների ուժեղացումից, այլ սոցիալիստական երկրների դժվարությունների և սխալ քաղաքականության պատճառով: Տոտալիտար վարչակարգը թուլացավ Ստալինի մահից հետո, այսուհանդերձ ո՛չ Խրուշչովը, ո՛չ Բրեժնևը չկարողացան ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը, իսկ Գորբաչովն էլ փոքր հնարավորություն ուներ փոխել իրավիճակը, բայց նա ապակողմնորոշեց իր մերձավոր զինակիցներին և գաղտնի անցավ ԽՍՀՄ-ի ու ԽՄԿԿ-ի հակառակորդների կողմը: Մ. Գորբաչովը 1991թ. օգոստոսին հիվանդության պատրվակով գնաց Ֆորոս հանգստանալու, երբ վտանգվել էր երկրի անվտանգությունը: Նա ոչ մի քաղաքական պայքար չձեռնարկեց Բ. Ելցինի «խմբակցության» դեմ: Մ. Գորբաչովը չէր տիրապետում խորհրդային պետության և ԽՄԿԿ-ի կառավարման գիտությանը, նա վատ գիտեր սոցիալիզմի տեսության հիմնահարցերը և չուներ գաղափարախոսական դոկտրինա, ինչպիսին էր Դեն–Սյաոպինը: Նա չարեց անհրաժեշտ քայլեր ժողովրդի բարեկեցության ուղղությամբ: Սկսեց իրականացնել ժողովրդավարության ու հրապարակայնության գործընթացները՝ առանց նախկին իշխանության ավտորիտար լծակների օգտագործման: Գորբաչովը մեծապես թուլացրեց կուսակցական ապարատը, քանզի հաճախ էր փոխում կադրերին՝ առանց հաշվառելու նրանց գաղափարատեսական պատրաստվածության մակարդակը: Բացի դրանից, նա երկրի առաջին նախագահն էր՝ առանց ժողովրդական մանդատի:

1991թ. օգոստոսի 21-ին ավարտվեց տոտալիտար սոցիալիզմի մոդելի փորձարկումը:

Վերջերս ԱՄՆ-ի պետական քարտուղար Բեյքերը հայտարարեց. «Մենք 40 տարվա ընթացքում ծախսեցինք մեկ տրիլիոն դոլար, որպեսզի

կարողանայինք սառը պատերազմում հաղթանակ տանել ԽՍՀՄ-ի դեմ: Վերջնական արդյունքը ստացվեց 1992թվին, թեպետ այն պլանավորվել էր 1945թ.»:

Պատմությունը այնպես դասավորվեց, որ Ռուսաստանը XX դարում դարձավ խոշոր քաղաքական ցնցումների թատերաբեմ: Հարյուրամյակի սկզբին Գերմանիայից թափանցեց մարքսիզմը, որը առաջացրեց եղբայրասպան արյունալի հեղափոխություն, իսկ հարյուրամյակի վերջում ԱՄՆ-ից տարածվեց ժողովրդավարությունը, որը պատճառ դարձավ գերտերության կործանման՝ տարանջատելով խորհրդային ժողովուրդներին:

Ռուսական և նույնիսկ արևմտյան բազմաթիվ հետազոտողներ գտնում են, որ ԽՍՀՄ-ը թեպետ մխրճվել էր 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբներին տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական և բարոյական ճգնաժամի մեջ, սակայն դրանք չէին կարող պատճառ դառնալ նրա փլուզման համար: ԽՍՀՄ-ը կարելի էր փրկել միայն հիմնարար վերակառուցմամբ՝ ամբողջատիրությունը վերափոխելով սկզբունքորեն նոր համադաշնությամբ: Այսօր հասարակության զարգացման միտումները տանում են քաղաքացիական հասարակության, որը անհնար է պատկերացնել առանց բոլոր սոցիալական շերտերի բարեկեցության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապիովման ու ժողովրդաիշխանության:

Ո՛չ սոցիալիզմ, ո՛չ կապիտալիզմ, այլ նոր, հիբրիդ հասարակություն, որը զուգորդում է երկու համակարգերի դրական արժեքները, այսպիսին է լինելու մեր երկրի ոչ հեռավոր նպատակը:

Սոցիալական առաջադիմությունը օրինաչափ է և անշրջելի, որքան էլ մարդկության զարգացման մեջ լինեն լճացումներ, զիգզագներ, ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային ընդգրկումներով:

Այսուհանդերձ, այսօր կատարյալ հասարակության կառուցման մասին ցանկացած կանխատեսում պատրանք է: